Կրթության իրավունք

Գերմանիայում յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի կրթության: Գործում են բազմաթիվ կառույցներ, որոնք զբաղվում են անձի կրթությունն ապահովելու հարցերով: Փախստականի կարգավիճակ պահանջող անձը կարող է դիմել Միգրացիոն ծառայություն աշխատանքի և ուսման թույլտվություն ստանալու համար: Եթե մեծահասակների դեպքում կարող են լինել մերժման դեպքեր, ապա երեխաների դեպքում հարցն ավելի լուրջ է և բացառում է մերժման դեպքերը: Դպրոցական երեխաները ովքեր մուտք են գործել Գերմանիա արդեն դպրոցական տարիքում, կարող են շարունակել իրենց դասերը Գերմանական դպրոցում, իհարկե առաջ է գալիս որոշակի բարդություն լեզվական առումով, բայց գոյություն ունեն լրացուցիչ պարապունքներ, որոնց մասնակցելու միջոցով աշակերտի հետ ուսուցիչը անհատական պարապունքով փորձում է թեթևացնել դասերի հետ կապված բարդությունները: Անկախ ընտանիքի կարգավիճակից երեխան պետք է կրթություն ստանա: Գերմանիայում գործում է երեխաների հարցերով զբաղվող հատուկ ծառայություններ, որոնք համապատասխանաբար զբաղվում են երեխաների բժշկական, կրթական և այլ հարցերով: Օրինակ, եթե անգամ ծնողը չզբաղվի երեխայի ուսման հարցերով, ապա համապատասխան կառույցը հետևելով, որ երեխայի տարիքը դպրոցին համապատասխանում է սկսում է զբաղվել երեխային դպրոց տեղավորման հարցերով և նամակի տեսքով ծանուցում է ուղարկում և զգուշացում ծնողին, որպեսզի առավել ուշադիր լինեն երեխայի հարցում: